

Ն եր ա ծ ո թ յ ու մ

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույցները կառուցվում են ՀՀ կառավարության 2000թ. մարտի 31-ի թիվ 135 որոշմամբ հաստատված «2000 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ» նախատեսված ճյուղային (զերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, այլ կազմակերպությունների հաշվետվությունների, հաշվարկների և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից դրանց ամփոփման, ինչպես նաև ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվա-հրատարակչական գործունեության արդյունքում (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլ հաղորդագրություններ, վերլուծական զեկույցագրեր) ամփոփված նյութերի հիման վրա:

1999թ. ապրիլից սկսած, զեկույցների բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված՝ «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» էկոնոմիկայի և ֆինանսների գծով երկրի վիճակագրական տվյալների տարածման ստանդարտի (ամսական) կառուցվածքով:

Ամսական զեկույցները ներկայացվում են հակիրճ, եռամսյակայիններն՝ առավել մանրամասն, իսկ տարեկանները՝ ընդլայնված ու ընդհանրական:

Եռամսյակային զեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկությունները գետեղվում են Ինտերնետի ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության <http://www.armstat.am> էջում:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույցների օրինակներն պահպանվում են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության գրադարանում:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույցների հատվածներում առկա նախնական կամ հաշվարկային ցուցանիշները հաջորդ հրատարակումներում կարող են ենթարկվել ճշգրտման, պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածը հնարավորություն չի ընձեռում սկզբնական տեղեկատվության արժանահավատությունն առավել խորությամբ ստուգելու, ինչի իրականացումը «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի (գ) կետի դրույթներին համապատասխան, պահանջում է լրացուցիչ ժամանակ:

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
տվյալներ չկան	...
չնշին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	x
տվյալները ճշգրտված են	*

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կտրացմամբ: